



ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշկարիոյ համար  
Տարեկան 12 Տր.  
Վեցամսեայ 6 »

Արտասահմանի համար  
Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար  
Տարեկան 3 Տր.  
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՄԵԼԻ

Իրանացի ստոր ստաբիլներու համար 40 սանթիմ  
Ե. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ Ե. երեքին սանթիմ սանթիմներու համար 20 Օլո գեղջ կըլլայ:

Պաշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

# ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalémcarian  
(Autriche)  
Mechitharistangasse W. 4  
Vienne

Կանադա եւ դրամ դրկի  
Խմբագրութեան հասցիքի

«ВЪСТНИКЪ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չին տրուի

Արտասահմանի համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲՈՒԹԻ ԵՒ ՇԱՔԱՍ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

### ՇԱՐՋՈՒՄԻ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ

#### ԽԱՒԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Գրեց

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

«Նարժուժի յառաջիկայ թուով պիտի սկսինք հրատարակել այս վէպը, որ առնուած է գաղթական հայութեան կեանքէն:

#### ԱՐԻՒՆՈՏ ՅՈՐԵԼԵԱՆ

Կարմիր հարսնիքի, Համիտի գահակալութեան 25ամեայ յոբելեանի տօները ըսկսին այսօր: Պոլսի թուրք եւ օտար շրջանները թերթերը, այս առաւօտ աղուոր թուղթերու վրայ, ամենէն փառաբանական, ամենէն խաւտուտիկ բառերով եւ էն շուրջը զարձուած ընելով հատիկ հատիկ պիտի թուեն բոլոր այն մեծութիւնները, բոլոր այն յառաջիկա մութիւնները, բոլոր այն բարեւորագոյնները՝ որոնք Օսմանեան ժողովաւալ կայսրութեան մէջ, մէկ ծայրէն մինչեւ միւսը, ներկայ յոբելեար Վահագնի բռնապետութեան օրով հիմնուած, կատարուած ու գործադրուած են... երեւակայութեամբ:

Քաղաքակրթիւնը եւ քաղաքակրթութեան փոքր պետութիւններու պաշտօնական ներկայացուցիչները, կայսերական, արքայական իշխաններ, զուքսեր, մարքիզներ, կոմսեր, պարոններ, ասպետներ եւ այլն պիտի թափին հոն, իրենց վահագններու յարգանքը, բերկրանքը, համակրանքը ու շնորհաւարութիւնները ներկայացնելու այն մարդուն, որուն գոյութիւնը հեզնութիւն մը, արատ մը եղած է քաղաքակրթութեան հարգութեան եւ կամ մարդկային քաղաքակրթութեան:

Թուրք պաշտօնէութիւնը, վեզիրներ, վալիներ, ֆէրիզներ, շէյխեր, մոլլաներ եւ սօֆիաներ, վերջապէս քաղաքական, պինուորական ու կրօնական մեծ ու փոքր պաշտօնատարներ պիտի խմբուին

յարգանքով, պատկառանքով, գարգանքով այն մարդուն շուրջը, որուն գահակալութիւնը պատահաւ մը եղած է իրենց հայրենիքին եւ սրուն օրով Թուրքիան հեռուցեալ ինկած, պղտկեցած, քայքայուած եւ արիւններու մէջ խղզուած է:

Հոն, երբազրի գառազիզին մէջ պիտի ծածանին յոյն, պուլկար, ասորի, կաթոլիկ, բորտիկ, հրէայ ազգութիւններու եւ հասարակութիւններու բոլոր կրօնական ներկայացուցիչներու գէմքերն ու տարազները, իրենց ժողովուրդի ազօթքը, մաղթանքը գնելու համար յոտս այն գահայից, որ կը կրթնի այդ ժողովուրդներու սուած անթիւ զոհերուն վրայ:

Եւ իբր ամբողջացում, իբրեւ պսակ մը այս հրէշային, սանդարտմտական տօնին հայ պատրիարքը շրջապատուած արքայական պոստոններէ, եպիսկոպոսներէ, առաջնորդներէ, վարդապետներէ, քահանաներէ եւ վարչական մեծ աղաներէ, մէկ ձեռքը ոսկեգիր ուղերձ մը, միւսը թանկագին նուէր մը, պիտի երկրպագէ այն Մողթին, որ քառորդ դար մը ամբողջ հայութեան արիւնը ծծեց ու կը ծծէ զեռ՝ քամելով անոր կենսականութեան վերջին կաթիլը:

Այդ կարմիր, արիւնոտ հարսնիքին արձագանգը Պոլսէն դուրս պիտի պոսթկայ եւ մոլեգին, խենդ, փրփրոտ վէտվէտուներով պիտի ընդարձակուի, տարածուի թրքական երկրի բոլոր անկիւնները:

Գաւառներու մէջ եղած բոլոր մեծ ու փոքր կեղծոններու պաշտօնատուները պիտի լուսազարդուին եւ բռնի հոն պիտի համախմբուին վաստակաբեկ, շարձարուող, գայարուող, հեծող, ոգեսպառ, կողպտուած, անօթի, մերկ ազգութիւնները՝ ընդհանուր, յիմար, կոյր խանդավառութեան մը մէջ խղզելու համար իրենց ներսը լթերուած, ամբարուած սխր, առեւտրութիւնը, վրէժխնդրութիւնը, հեծկտանքն ու հառաչանքը:

Հոն դիւահարներու պէս պիտի երգեն, պիտի պարեն, պիտի խմեն, պիտի կանչեն ու պիտի ծափեն:

Ու հրէշային, գոթային է այս. ժիւ եւ իրոր գարբուն մէջ կատարուած ու կատարուելիք խոյտառակութեանց վիթխարի, անճոռնի, հսկայ հրաշակերտը պիտի բլլայ:

Չէ՛ կեանք մը՝ որ համակ ոճիւր կը հոտի, անձ մը՝ որ արիւնի բազմաթիւ խաւերով օժուած, ծեփուած, թանձրացած է շրջան մը՝ որ եղբերգութեանց էն առեւիտներն, էն ողբերգականներն կատարուած են, ո՛նեյու համար:

Կանչեցէք Պոլսոսնի արքունիքին ամբողջ սեւագոյն գահճապետները, տուէք անոնց ձեռքը պուլկարներու մորթերէ շինուած թմբուկներ, սերպերու ոսկորներէ շինուած փողեր, հելլէնոհիններու մազերէ պատարաստուած սազեր, ժողովեցէք հայ մանուկները, անտէր անտիրա՛ն որբերը, ցցեցէք երբազրի շորս կողմը եւ վառեցէք անոնց գլուխները, թող այդ մատաղ խորոյկներու լոյսը իր ցոլքերէ փռէ այդ հրէշային տօնին վրայ: Օշարակի տեղ վազցուցէք մարգու արիւն, թող բոլոր շատրուանները արցունք ցայտեցնեն, հեծող, հեծկտող հպատակներու արցունքը:

Երբազրի բացաստանը ծածկեցէք անհամար նահատակներու գերեզմաններէն քաղուած ծաղիկներով, մէ՛ տեղը բարձրացուցէք հսկայ բուրգ մը գանկերով եւ որուն գագաթը թող բազմիինքը Համիտ իժերով հիւսուած՝ ու անոր շուրջը եւրոպական քաղաքակրթութեան մարդկութեան ներկայացուցիչները ձեռք ձեռքի տուած թող պարեն գոթային, դիւային պար մը, արժանապէս տօնելու համար ատ կարմիր հարսնիքը, ատ արիւնոտ յոբելեանը:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

—)(—

### ՕԳՈՏՈՍ 14Ի ՆԱՀԱՏԱԿ ՀԵՐՈՏԵՐՈՒՆ

Ողբոյն ձե՛զ ընկերներ՝  
Խաչի սակ զոհուած՝  
Ուխտապան զինուորներ...

Արդարութիւնը սոսով գրկեցիք,  
Միջազան ներսով չի եր ձեր հոգին.  
Մահաւ ինտեֆերնիդ սիրով զոհեցիք  
Թշուառ, հաշտուած անտիր մեր ազգին:

Ձեր գոռ որոսով ազգեր ցնցեցիք  
Թուրքի պայքարով շայնուցիք մանրան,  
Եւ ազատութեան դրօշը, ուղղաճիգ  
Միշտ բարձր պահած ինկաք միասն:

Ձեր սեղը բռնող ձեր յաջողները,  
Ձեզ պէս անտե՛ք աչ չին ուզեր ծոխը,  
Միշտ սուր կը պահէ՛ք ձեր վեհ պատերազ,  
Կոռիչ, միշտ կոռիչ, յաղթիչ կա՛մ  
մեռնիչ:

Ստրուկ շեղուներ, վարձկան զոչակներ

Մոռե՛ք ջանացի՛ն ձեր կերտու ֆայլը,  
Փորսֆարշ իժեր, շարժ սողուններ  
Տակիչ ջուղեցի՛ն ձեր փառքի՛ն փայլը:

Բայց կանցնին օրեր, կուգայ մեծ  
րոպէն  
Ու կը ճշդուի ձեր բռնած ուղին,  
Եւ ձեր ու մանուկ արցունքով շե՛ն  
Ձեր անթի՛ծ կեանքը բերնովն աշուղին:

Ձե՛զ, ինկած ընկերներ՝,  
Գնակով խորոված,  
Թուրքիոյ յոշոտուած  
Սուրբ անհատակներ...  
Ձեր անխաչ շիրուհին,  
Ձեր կոռուած ամիւնին  
Կը բերե՛ք ճողորջն...

### ՈՍԿԵՏԱՌ ՈՒՂԵՐԸ

Տարիներէ ի վեր, վարագոյրներու ետեւ կատարուած աչքկապուկ կատակերգութիւնները այսօր հրապարակուած արար աշխարհի առջեւ կը կատարուին:

Պոլսական հայ լրագրիչները կը յայտարարեն՝ թէ Օրմանեան պատրիարք, Թուրքիոյ հայութեան լրագր ներկայացուցիչը, ինչան երախտագիտութեան, եւ խորին հաւատարմական զգացմունքներու, «Ալլահի» փոխա-

նորդին, իսլամական կրօնի պետ խալիֆ, Մեծ Մարդասպանին գահակալութեան 25րդ տարեդարձին առթիւ, ուղերձ մը կը պատրաստէ եղեր, մատուցանելու համար յոտս կայսերական գահոյից:

Եւ այդ ուղերձը ոսկետառ պատրաստել կուտայ Օրմանեան:

Ուղերձը պիտի պարունակէ հայ ազգին հինգհարիւր տարիներէ ի վեր Օսմանեան տիրապետութեան տակ վայելած ազգային և կրօնական ազատութիւնները, կեանքի ապահովութիւնը (•••), և մասնաւորապէս հօն պիտի շեշտուին Համիտի շնորհած բազմաթիւ և բացառիկ այն առանձնաշնորհումները (•••) որոնք կը գերազանցեն եղեր քան իր նախորդներուն տուածները:

Այս աստիճան ստորնութիւն, վատութիւն, զէվզէկութիւն կարելի է միթէ մտածուիլ, որը Օրմանեան յանձն կառնէ գործադրել լոկ իր քսակի պարտութիւն և ճղճիմ գոյութեան ապահովութեան համար, ինքզինքը անգիտակ ձեւացնելով վերջին տարիներու մէջ կատարած և պատմութեան մէջ նմանը չի տեսնուած հայու կրած սարսափելի հարուածներուն: մուռալով հարիւր հազարներով զոհերը, տանեակ հազարներով որբերը, և միլիոններով հեծող ժողովուրդը, որոնց արդար բողոքի ձայնը երկրի մէկ ծայրէն միւսը արձագանգ կուտայ ազգերու ականջին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 7 Օգոստոս

Սպաղանք գիւղի կոտորածը քիչ մը անհանգստութիւն պատճառեց տեղւոյ զեսպաններուն:

Սըր Նիքոլաս Օ'Քոնըրը, անգլիական դեսպանը՝ առաջինը եղաւ որ կտաք նստաւ, Բ. Դուռը գնաց և արտաքին գործոց նախարար, Թէֆֆիզ փաշայի հետ տեսակցութիւն մը ունեցաւ: Դեսպանը քաղաքավար ձեւերով ու քնքոյ մեղմութիւնով մը նրախրեց կառավարութեան ուշադրութիւնը Սպաղանք գիւղի «խառնաշփոթութիւններուն» վրայ:

Կառավարութիւնը իսկոյն Բաղէշի վարչութեան պաշտօնական առաքողքը առջ նետեց. որու մէջ ըսուած էր թէ 16 հոգի աւազակներ պատսպարուած էին գիւղին եկեղեցիին մէջ, ամէնքն ալ Ռուսիայէն եկած, ամէնքն ալ զինուած: Տեղական իշխանութիւնը պահանջեց որ անձնատուր ըլլան, բայց անոնք զէնք պարպեցին զօրքերուն վրայ և եթէր հոգի սպաննեցին, այն ատեն զօրքերը կատարեցան, յարձակեցան եկեղեցիին վրայ, 16 աւազակներն ալ սպաննեցին, և որով եւ կարգը վերահաստատուեցաւ շնորհիւ Վեհ. Սուլթանին:

Օ'Քոնըրի գիմուսին հետեւեցան մէկալ դեսպաններու գիմուսները

Ու այս ամէնը ճիւղեր Օրմանեան կամովին կուզէ թաղել իր ոսկետառ ուղերձի մէջ:

Եւ ո՞վ է մեղաւոր ընթերցող, որ Օրմանեան իբր բացարձակ պետ, առաջնորդ կոչուելով ազգային ամէն արժանապատուութիւն, իր անձնական փառքին և շահին համար լոկ, Պալատին և Դրան մէջ կերթեկէ շարունակ, զմեզ օրօրելով. խարելով շարունակ, ի՞նք թէ մենք:

Ի հարկէ մենք ենք մեղաւորը, մենք որ այդ ճիւղի պատրիարքութեան առջի օրէն հասկըցանք թէ ինչ տեսակ մարդ մըն է որ կը վարէ թուրքիոյ հայութեան ճակատագիրը, և թող տուինք որ ուզածին ու սանձարձակ գործէ:

Այն պահուն երբ Սուսնոյ, Մուշի, և Բաղէշի կողմերէն կուտորածներու, սարսափներու նոր լուրեր կուգան, մէկ խօսքով հայութիւնը սովի և վայրագութիւններու մէջ կը թապալտկի օրհասական շարչարաններով, աստին այդ Պարիսրբը, փոխան բողոքի երախտագիտական ուղերձ մը կը մատուցանէ:

Ուրեմն մեր մեղքերուն, մեր թոյլ, անհոգ վարմունքին արժանաւոր պատիժն է որ կը կրենք: Եւ եթէ շարունակուի այս, չենք գիտեր թէ՛ վաղը սվ գիտէ ուրիշ ինչ հրէշային ճիւղեր թիւն մըն ալ պիտի գործադրէ:

Բայց կը յուսամ թէ հայու-

(Իհարկէ ի բաց առեալ գերմանը) Աստիճան ամէնքն ալ գիմուս ըրին անուսկ ձեռնոցներով՝ և ֆիզիքական ու բարոյական ձեռնոցները... ամենայն զգուշութեամբ և քնքուշութեամբ մը, Համիտի յոբելեանական ձեռնոցող սրտին չի դպչելու համար, անոր 25ամեակի տօներու մէջ անհանգստութիւն մը չը պատճառելու համար... է՛հ, 200 կամ 600 մը հայ է կորսուելը... Ի՞նչ փոյթ...:

Կառավարութիւնը ամէնուն ալ «16 հայ և 7 թուրք սպաննուածք» աչք կը խոթէ, Բայց երբ եզան դեսպաններ, որ նկատեցին թէ իրենց առած տեղեկագիրները և Հայք Պատրիարքարանի զրկած լուրերը սպաննուած հայերու թիւը կը հասցնէ 200—600ի՝ այն ատեն կառավարութիւնը հայրական եռանդով մը յայտարարեց ամէնուն, որ պիտի մասնաւոր քամիսօն մը զրկէ տեղւոյ վրայ քննութիւն մը քանայ, մեղաւորները պատժէ: Ու պիտի տեսնաք, կուրցնեմ ես—որ այդ մեղաւորները նորէն հայերը պիտի ըլլան, պատիժն ու պատսպարութիւնը (ա՛խ աս չարաբաստիկ բառը—Բարեղի յախտեանական վտանակին և Լոնտոնի Պատակտիչին խելագուռներէն վիժուած) հայերը պիտի քայլն...:

Մինչև աս կէտը քնքոյ, նուրբ, կամակարար էր Անգլիական Ռազմաւորային ներկայացուցիչը:

Օ'Քոնըր քնքոյ էր, երբ խնդիրը 200—600 անմեղ հայերու արիւնին

թիւնը ալ չի պիտի համբերէ և Ռոմանեանի այդ «ոսկետառ ուղերձը» վերջին ազգադաւ գործը պիտի ըլլայ իր անխիղճ պաշտօնավարութեան:

ՀԱՄ

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ռուսիայի մէջ կը կարգանք:

Սասունի քանի մը գիւղերուն մէջ տեղի ունեցած ցաւալի զէպերու մասին հիւպատոսական տեղեկագիրներուն եւ պատրիարքարանի ստացած տեղեկութիւններուն մանրամասնութեանցը մէջ քիչ մը տարբերութիւն կայ, բայց իրողութիւնը այն է որ կոտորած, աւարտութիւն ու հրդեհ տեղեկութիւններ հասնին դեսպանատուններուն որոնք դիտակցարար գիմուսներ կը կատարեն Դրան. ցարդ ձեռք բերուած մանրամասնութիւններէն կը հետեի թէ:

Սպաղանք գիւղը կը գտնուի լեռան մը վրայ. Տարբորկի գէմը, ուր 1894ին տեղի ունեցան կոտորածները: Կը պարունակէ 25 տուն, և բնակչութիւնը կը բաղկանայ 150 հոգիէ մարդ կին և տղայ, որոնք իբր 400 ոչխար ունէին: Այրերը քաջ լեռնցիներ են: Անցիալ տարի, իրան եւ Պահան յիւրա գեղերը յարձակեցան գիւղին վրայ և ոչխարներու հօտ տարին:

Լեռնցիները հաւաքուեցան Մուկար անուն պետի մը հրամանին ներքեւ՝ հետապնդեցին յափտակիչները հասան անոնց, զարկին ու ետ առին ոչխարները:

Կը վերաբերէր, բայց կոշտ, կոպիտ, վճռական դարձաւ ան, երբ հեռագիրը ուրիշ լուր մը բերաւ:

Բաղդին մէկ քմայքը, չարարաստիկ զուգարիպութեամբ մը ուզեց որ Սպաղանքի արեսն տաք-տաք շիթերու պահուն Անգլիական քոնսուլը վանայ մէջ, իր թարգմանի և քանի մը զինուած անձերու պահպանութեամբ վանայ վիլայէթի մէջ պտոյտի ելլայ:

Քաղաքէն բաւական հեռու լեռներու մէջ 100 զինուած քիւրտեր կը յարձակին թագուհիի հիւպատոսին վրայ. թարգմանը կը վիրաւորուի, զինուած մարդերը կը փախին, իսկ հիւպատոսը լեղիւ պտոսած քաղաք կը նետէ ինքզինքը: Քիւրտերը կը տանին հիւպատոսին շանթան ու իրերը, հետն ալ իհարկէ եղած բոլոր քաղցրերը... Մարդ չի սպաննուել, այլ միայն թարգմանը կը վիրաւորուի: Բայց տարբեր է Սպաղանքի արեւը—ան ջուր է, լոկ կարմիր ջուր և տարբեր Ենոթհաշուք թագուհիին թարգմանի կաթիլ մը արիւնը...:

Հիւպատոսը իսկոյն հոս կը հեռագրէ իր դեսպանին, իսկ միւս կողմէն ալ տեղւոյ վալիին կիռ գիմուսներ կընէ և կը ստիպէ որ իսկոյն քիւրտերուն ետեւէն զօրքեր զրկէ: Զօրքերը ձամբայ կելան, եթէ քիւրտերը կատակոտորութեամբ վայրը սպաննեն ալ զօրքերը քիթերնին հակառակ ուղղութիւնով մը կը դարձնեն և հայ գիւղ մը կը կողոպտեն:

Օ'Քոնըր իր հիւպատոսի հեռագիրն առածին պէս փրփուրը բերանը

Այն ատենէն ի վեր այդ քիւրտերը որոշած էին առաջին ներկայացած առիթէն օգտուիլ վրէժ լուծելու համար: Ասոնց զրգմանը վրայ թէ ուրիշ ու եւ է պատճառաւ զինուորական արշաւանք մը կազմակերպուեցաւ, այս կէտը դեռ լուսաբանուած չէ:

Իրողութիւնը սա է որ Սպաղանք իբր թէ հայ յեղափոխականներու կամ աւազակներու սպաստարան է, Բաղէշի զինուորական հրամանատար Այի փաշա կանոնաւոր զինուորներու եւ քիւրտերու գլուխն անցած Սպաղանքի գէմ քաղեց: Յուլիս 3 էր: Բոլոր բնակիչները բացի ութ ինը հոգիէ որոնք յաջողեցան խոյս տալ, ջարդուեցան, և ամբողջ գիւղը հիմնայնապէս կործանեցաւ: Քիւրտերը ըստ Մակարը կը փնտռէին, բայց անոր կինը միայն գտան, որ յիշէր խոյստեղեցիին խեղճ կնիքը, յետոյ ուրիշ երեք գիւղերու վրայ յարձակելով սկսան կողոպտել ու ջարդել: Բայց միւս գիւղերը համեմատապէս քիչ վնասուեցան, և քանի մը գիւղացիներ միայն սպաննուել են:

Ալի փաշա, Բաղէշ դարձին, հետեւալ կիրպնով պատմած է իր չահատակութիւնները հայ առաջնորդին:

Իմացած ըլլալով որ հարիւրի չափ սպասուէն հայ յեղափոխականներ Սպաղանք գիւղը ապաստանած էին, ձամբայ լեռ կանոնաւոր զօրքերով իրիւ առաջնորդ հետն առնելով քանի մը քիւրտեր: Տարբորկի մէջ ամէն բան հանգարտ գտաւ: Յուլիս 1ին Սպաղանքի առջեւ նստաւ, հոն, սա շահեկան պիտի ըրաւ որ այն հարիւր հայ յեղափոխականներէն որոնց հատնարար պիտի հանդիպէր քան երեքը միայն հոն էին, ասոնք ամբարներ են գիւղին եկեղեցիին, ուսկից կրակ ըրեր են եղեր զինուորներուն վրայ: Հասնելուն երբոր

Բ. Դուռ կը վազէ. կիռ, անասելի կուպիտ ու վճռական զիմուս մը կընէ:

Նոյն օրը եւ եթ Նըլաղը որը կը գիմէ և խիստ վճռական զիմուս մըն ալ հոն կընէ. կը սպառնայ և այլն: Իհարկէ կառավարութիւնը խօսք կուտայ հիւպատոսին կողոպտուած իրերը վերադարձնել, և անպատճառ քիւրտերը պատժել:

Լուր մըն ալ հաղորդեմ Թուրքիոյ մէկ ուրիշ անկիւնէն:

Նափայի միւտերի էլ—Աւագաֆ էֆէնտի մասին աս երկու տարի է գէշ գէշ լուրեր կը հասնէին հոս. կաշաք ուսել, պետական ստակներ իւրացնել, խել մը ապօրինութիւններ և այլն:

Իհարկէ բողոքները հոս էլ—Աւագաֆի զրկած ոսկիներով երկար ատեն խուլ մնացին, բայց օր մըն ալ թիւը կըտրուեցաւ, ստատանային չարախը մաշեցաւ: Ասկէ քննիչ մը զրկեցին Նափա Գննիչը գնաց, բայց էլ Աւագաֆ իր երկու մեղաւորներով զայն տուն մը հրաւիրեցին և աստիճանները կաշաք, որ ճիւղերու ծալէ երթայ: Չեմ գիտեր կաշաքին չափն էր քիչ, թէ քննիչը անկաշաք անձ մըն էր, բայց իրողութիւնը այն է որ էլ—Աւագաֆ և իր ընկերները տեսնելով որ քննիչը չի համաձայնի լաւէ կը բռնեն անոր ստեղծն ու ձեռքերէն և երկրորդ յարկի պատուհանէն փողոց կը նետեն:

Անցորդները զայն կիսամտ տեղւոյն՝ օնուխը—պաշտօնատեղին կը տանին, Գննիչը հոն ուղի կուգայ:

որը որոշեց յարձակել եկեղեցիին վրայ . բայց նախ եւ առաջ մագառներով շրջապատեց զայն եւ կրակի տուաւ : Ամբողջ երկու ժամ բոցերը կը ժայթքէին եկեղեցիին շուրջը . եւ երբ վերջապէս ներս մտաւ , տեսաւ որ քսան երեք հայ յեղափոխականները միայն երեք հոգի էին : Ասկից զատ , ութսունամեայ քահանայ մը , կին մը եւ տղայ մը կային :

Քահանան , ըսած է Ալի փաշայ , մեղսակից էր յեղափոխականներուն , որոնց հետ ինքն ալ սպաննուեցաւ . կինն ու տղան ալ նմանապէս մեռան կռուի միջոցին . բայց զիպուածաբար միայն , ինչ որ խորին ցաւ կը պատճառէ իրեն : Բնակիչներուն մէջէն տասը՝ զինուորներուն դիմադրած ըլլալով՝ նոյնպէս սպաննուեցան , գալով գիւղին . ինք անհրաժեշտ հարկ տեսնելէ զայն ամբողջովին քանդել :

Որով ընդամենը տասնըվեց հոգի մեռեր են , իւր ուսանողից աւագակները՝ կռտէ , եւ Ալի փաշայի պատմածին վրայ յենլով է որ մինչեւ հիմակ պատասխանած է այս գէպքին վրայ իրեն եղած հարցումներուն :

Ռաճիֆալի այս պատմածի համանման Պոլսէն գրուած նամակ մը հրատարակած է նաեւ Ֆրանսիոյ Չայրուկի :

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՎՈՒԹԵԱՆ

Նորութիւն մը . հուստաւքըննութեան դարը կսարինք : Գուցէ շատերը պատմութենէն ազատ գաղափար մը միայն ունին՝ կաթոլիկ դաւանանքի ամբողջական համար հաստատուած այդ գաղտնի ատեաններու գործած եղբու-

ներու մասին , որոնք 13 և 14րդ դարերը սարսափի ու սեւ արհաւիրքի մէջ պահեցին : Տգիտութեան մէջ տնքացող հայ կղերականութիւնն ալ կենդանութեան նշոյլ մը տալու յոյսով՝ կը ձգտի այդ անդրդարեան մոլի նախախապաշարուներուն արձագանգը հանդիսանալ , հակառակ և ի փաստ մեր եկեղեցւոյ ազատ սկզբունքներուն :

Սօֆիայի մէջ ծանօթ , պատուաւոր գիրքի և մի քանի զաւակայ տէր անձ մը , որ ժողովրդի ձայնովը ու քուէովը թաղական ընտրուած է , այս օրերս Պուլկարիոյ Այցելու Հովուի սարսափելի անաթեմական վճռին ենթարկուեցաւ :

Տիրամօր , Աստուածամօր , նախաինք հասցուցած ըլլալուն համար իբր—նզովեալ կը զրկուի կրօնական շնորհքներէն ու պաշտամունքներէն , կը զրկուի եկեղեցիէն , կը զրկուի Սերուէններու , Քերթէններու , պահապան հրեշտակներու և երկնքի բոլոր սուրբերու պաշտպանութենէն և շար գեւեղութիւններէն :

Այս վճիռը մեր կրօնականներու խոր տգիտութեան բնական արդիւնք համարելով , գուցէ ներողամիտ գտնուի զարգացած դատարարը , սակայն ատ՛ ամբողջի առաջ իսպառ կը ջախջախէ կրօնքի նշանակութիւնը . ան սառի պէս կը պաղի իր եկեղեցիէն , կը խրտչի եկեղեցական-

ներէն : Թէ ինչ հիման և ի՞նչ ապացոյցներու յենլով լոկ քահանայի մը տեղեկութիւններուն կրթնած , կը յանգանի տարիքը առած բարեպաշտ հայու մը կրօնական զգացումները ծանրապէս վիրաւորել Այցելու Հովու մը , որոշ չենք գիտեր :

Բայց աս առաջին անգամը չէ , մեր Այցելու Հովուը՝ կոյրը իր փայտը ճանչցածին պէս , այս քահանայի յորդորներովը խել մը անտեղի անօրէնութիւններ ըրած և ամբողջ Սօֆիայի հայութիւնը վշտացուցած է :

Իր կրօնական հովուին եկեղեցական իրատեսութիւնը ճանչնալ ամէն հայ պարտաւոր է . բայց նա ալ իր պարտականութիւններու կատարման միջոցին շատ շրջահայեաց ու անաչառ ըլլալու է , առանց ներգործուելու ոչ մի ազգեցութենէ : Հակառակ պարագային ծիծաղելի կը դառնայ , ինչպէս եղաւ այս անաթեմայի պարագային մէջ :

Ճշգրտութիւնը սա է թէ , յիշեալ անաթեմա ստացող անձը 1—2 ամիս առաջ քահանան խստիկ կը կշտամբէ իր պծգալի ու խռովարարական արարքներուն համար : Քահանան 1—2 ամիս անցնելէն յետոյ , հիմակ յարմար առիթ կընտրէ հաւատաքննական վճռով պատժելու , և իր խելով սարսափեցնելու թաղականները , որք զինքը արտաքսած էին : Աս քահանան Սօֆիա ոտք կո-

խելէն ի վեր ուրիշ գործ չունի , միայն խառնակել , պառակտել , ու այս ու այն անձը ցեխոտել , իրեն գործակից ունենալով ոչորմութեամբ ու նպատակով ապրող Սօֆիայի մէջ յայտնի ինկած մը : Ու այցելու հովուը փոխանակ հեռացնելու այդ մարդը՝ նոյն իսկ անոր գրգռմամբը անմեղ հայ մը կը նզովէ :

Բայց մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի այս ( ) :

Լուսաւորչական հայ մը  
Սօֆիա , 12 Օգոստոս

ՉՈՒԱՐԱՆ „ԿՈՒԹԷՆՊԵՐԿ“  
(Տպագրական տարեբու)

Կարճը Ատաղ . Ողիկ կարգ  
Հաշտար քարտրոքիւն

Ամէն լեզուէ տպագրական տառեր  
և զանազանք՝ գոհացուցիչ գնեցով  
Հասցէ՝

Fonderie typographique „Gutenberg,  
Sophia , Rue Graff Jgnatieff № 3 .  
6—25

( ) Եթէ այդ մարդը իրօք հայնոյած է Տիրամօր՝ յանցաւոր է . որչափ ալ ազատամիտ ըլլանք պէտք չէ ժողովուրդի կրօնական զգացումները վերաւորենք :

Իսկ յաւելի յանցաւոր է Այցելու Հովուը որ լոկ քահանայի մը վկայութեանը յենլով այսպիսի անզբըջըրհեղեղեան պատիժ մը կուտայ : Ծ . Խ .

իր ռաբօրը կը գրէ Պոլսյ կղերականական վարչութեան հասցեյով եւ հետեւեալ օրն իսկ հոգին կաւանդէ Ալլահին : Գինիչը նախքան պատուհանէն գուրս նետուելը՝ սուրբ խոշոր հարուած մըն ալ կը ստանայ :

Իհարկէ հոս իսկոյն պաշտօնեաները կուրախանան էլ-Ա. գափ եւ մեղսակիցները բաւական քանակութեամբ գեղին մտազ կը զըկեն հոս . . . Ու այսօր ատ երեք անձերն ալ , շնորհիւ Վեհ . Սուլթանին՝ ազատ կը պտտին ու իրենց պաշտօններուն վրայ են : Դատարանը զանոնք արդարացուց , որովհետեւ վկայ չկայ թէ ո՞վ է սուրով վիրաւորեր զո՞նք կամ ո՞վ է պատուհանէն գուրս նետեր , երեք անձերն ալ կըսեն որ իրենք չեն ըրեր : Վկայ չկայ . ուրեմն ապացուցուած չէ մեղաւորութիւնը . . . ուրեմն երեքն ալ անվեղ են . . .

Օ . sancta simplicitas . Օ . արդարութեան , օրէնքի ու երջանկութեան երկիր թուրքիս , գու առ ճամբով զեռ շատ ու շատ կը յատաշարդիմես : ԲԱԺ

Կ. ՊՈԼԻՍ , 11 Օգոստոս

Տեղական թերթերը ծանուցին արդէն՝ որ Համիտի 25ամեակի առթիւ այն ամէն բանտարկեալները , որոնք իրենց պատժի երկու երրորդ մասը լրացուցեր են ազատ պիտի արձակուին :

Կարգացի ատ լուրը : Եղբարեաներ , «ամէն բանտարկեալները» կըսէք—սուտ է , լիտի անամուտ սուտ : Դուք պիտի արձակէք զողերը , քսականաները , հրեհնաձիգները , ոճրա-

գործները . մարդասպանները . . . Ուրեմն ան է . ատ ամէն շարագործները ձեզի նման են , դուք անոնց հետ հոգեկից եղբայրներ էք : Իսկ ֆաղտֆալուն յանցաւոր կոչուած ազնիւ , անկեղծ , ժողովրդի բարիքը ցանկացող , գաղափարի համար զրկանքներ ու անձնազոհութիւն յանձն առնող անձերը պիտի մնան , պիտի հեծեն Պուլսոյ բանտերու , Աքեայի , Սինապի եւ Թարապուզի նկուղներուն մէջ , յաճախ շղթաներու շոտաչը միայն չբարեկամ ունենալով :

Գրեցէք , տպեցէք , ձեր բունաւորի այդ խաղերը այլեւս ոչ ոք կընան խաբել :

Փա՛ռք Աստուծու . Օրմանեան հրամայած է հայ բանտարկեալներու եւ աքսորեալներու ցանկն ալ կազմել , որպէս զի ատ մեծպաքէն երկար ցուցակը իր շնական ուղերձի եւ արեան գին նուէրի հետ միասին Համիտի ներկայացուի . . . կը կարծեն թէ Համիտ կընայ յանկարծ խենթենալ ու ամէնուն ներում շնորհել . . . Ես չեմ հաւատար , գիտեմ որ էն ազնիւները , էն պաշտելի անձերը նորէն պիտի տքան նկուղներու խոտաւոր մթնոլորտին մէջ եւ չի պիտի արձակուին , պիտի ելլան քանի մը անմեղներ , որ ֆէնէսըզ բռնուեր են :

Նոր լուր մըն ալ տամ : Պուլկարներուն աչքը լոյս : Հալածանք մըն ալ պուլկարներուն գէմ է սկսուեր

հոս : Ասկէ հազիւ 5—6 օր առաջ Սօֆիայի իշխանական թատրոնի դերասաններէն մէկը՝ Պ. Էգօնօօֆ , որ ընտանիքով հոս եկած էր պոստի , կասկածի կենթարկուի : Սէրօս փողոցին մէջ իր վարձած սենեակը երեք լրտեսներու այջալուրջ հսկողութեան տակ կըլլայ 4—5 օր , նոյն իսկ գիշերը՝ մոմեր վտոած կը հսկեն դերասանին վրայ . . . որովհետեւ քիչ մը կոշա ու տարօրինակ կերպարանք մը ունի եղեր . . . քիչ մը նման իտալացիի : Դերասանի տեսնելով որ կանգնած չեն տոր իրեն , անցաղիքը կաննէ բնասանիքով կառք կընար որ մեկնի ասկէ : Երեք լրտեսները հետը իսկոյն կը վազեն «Սալոն» : Էգօնօօֆի հետը կըլլայ եւ Պուլկար գործակալութեան առաջին թարգմանը—իբր բարեկամ ուղեկցելու եւ պաշտպանելու : Սոյնի մէջ ամենէն խանրակրկիտ խուզարկութիւն մը կը կատարեն դերասանին , իր կնոջ եւ զուակին վրայ : Իհարկէ ոչինչ կը գտնեն . ու մանաւանդ լրտեսները էջու մը պէս խայտառակ եղած կը կենան , բայց նաւը կերթայ . . . Ամբողջ ընտանիքը ետ կը մայ ճամբէն : Կը յսեմ որ Պուլկար գործակալը դիմում մը ըրեր , բողոքեր է աս անհի կասկածներու եւ խուզարկութիւններու , զէմ ու պահանջեր է ընտանիքին կրած վնասները :

Աս զեռ մէկն է , կըսէ առածը , ո՛ւր է զեռ ինը միացածը : Համիտի ականջը լուր է հասեր , որ Պուլկարիս անարշիստներ են երեւցեր եւ ստոնց մէջ տեսակ մը դաւադրութիւն է կազմուեր իր անձին զէմ . . . վա՛յ , Համիտի անձին զէմ : Ու հրամայել

է ձերբակալել ամէն եկող պուլկար : Անցեալ օր երկու աղեկներ , հազիւ 14—15 տարեկան , կուգան հոս Սէմինարիօն մտնալու , երկուքն ալ բանա կառաջնորդուին :

Ըստ կարգին եւ ուրիշ շատ մը անձեր ալ :

Անցեալ թղթակցութիւններովս իմացուցեր էի թէ Չ . Գ . անուն անձ մը կը փնտրուի ուտիկանութեան կողմէն : Գրած էի խել մը մանրամասնութիւններ : Ըսած էի նոյնիսկ որ իր հայրենիքէն մարդիկ հոս են բերուած զայն ճանչնալու եւ ձերբակալելու համար : Բայց այժմ դառն ծիծաղ . նոյն պարոնը արտասահման եղած թուրք հիւպատոսի մը կը ներկայանայ եւ կը խնդրէ որ գրէ Պոլիս , թէ ինքը հոս է , Պոլիս չէ , զուր տեղը անմեղ անձեր չի ձերբակալեն ու նեղեն :

Պ . Չ . Գ . ին վրայ երկրորդ պարտականութիւն մը կը մնայ , քիչ մը հետաքրքրուիլ եւ հասկնալ թէ ո՞վ է իր մասին տեղեկութիւններ հաղորդողը . ո՞վ եղած է արտասահմանէն իր մասնիչը :

Այս անկեղծ փափաքիս մէջ չեմ ուզեր որ նկատէ գէշ նպատակ մը—կարծեմ զիրար կը հասկնանք :

ԲԱԺ

( ) ( )

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սուլթանի գահակալութեան 25 ամեայ յորելանի առթիւ Պատ-

րիարքին կողմէ մատուցուելիք թանկագին նուէրն է եղեր Պոլ-

սոյ Տիբրիս-Թաշի ոսկիէ գեղա- կերտ մանրանկարը: Ասկէ վատ

Պատրիարքարանի պաշտօնէութիւնն ալ մտադիր է եղեր գե- յակերտ արկղիկներ մատուցանել:

— Գուլիստիան աղջկանց Որ- բանցի սաներն ալ բաց կապոյտ սնդուսի վրայ մետաքսով բան- ուած գորգ մը պատրաստեր են:

Երախտագիտական ուղերձի մը հետ Սուլթանին ներկայացնելու: — Պատրիարքարանը վերջերս

յաջողեր է Մալիէէն գանձելանց- եալ Զատկական տօնին Սուլթա- նին կողմէն Պատրիարքարանի

չնորհուած 50 հազար զրուշի գումարը: — Կեսարիոյ առաջնորդ Տրդատ

եպիսկոպոս, իր վիճակին Ս. Կա- րապետ վանքի մէջ ընդարձակ

դպրոցի մը հիմունքը դրեր է Յուլիս 30ին մեծ հանդիսաւորու- թեամբ:

— Նիկոմիդիոյ քաղաքին մէջ Հուգուգի նախնական դատարանը

ազգային գերեզմանատան շուրջը գտնուած պարագ գետինը ազ- գային սեպհականութիւն չըլլա- լուն վճիռ տուեր է: Առաջնոր-

դարդ Սահակ վարդապետի ջան- քովը: — Իտալիոյ սգակիր մայր թա- գուհին՝ Մարգարիտա, Վենե-

տիկի Միսիթարեանց վանքը այ- ցելելով, ամսոյս 3ին ներկայ

գտնուեր է իր հանգուցեալ ա- մուսնոյն համար կատարուած հո- գեհանգստին: Աբբա հայր Կիւ-

րեղեան անձամբ յայտներ է մի- արանութեան ցաւակցութիւնը:

«Բազմազգայի խմբագրութիւնը թագուհիին նուիրեր է «Բազմա- վէպ» Սեպեմբերի թիւը, որ

կը պարունակէ յուշարկաւորու- թեան հանգէսը, Հումպէրթօի, Մարգարիտայի, Էլէն թագուհիի

և Վիկտոր Էմմանուէլ Գ. ի կեն- դանագիրները: — Բէօթա հայր հայ Հոմէա-

կանաց առաջնորդ Հ. Մանուէլ Վ. որ վերջերս փափաք յայտներ

էր Հայաստանեաց եկեղեցւոյ գիրկը վերագրուելու Պոլիս եկած

և ազգային պատրիարքարան ի- ջած է: — Պարսից նահին անձնական

բժիշկ Յարութիւն խան Թիրեոսե- եան, որ ժամանակէ մը ի վեր

Եւրոպա կը գտնուէր, վերադա- ձեր է Թէհրան:

Սուլթանը, արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշայի բեր- նով

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Բ Գ Ի Ս

Սուլթանը, արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշայի բեր- նով

թէ շատ գոհ պիտի ըլլայ եթէ միւս տէրութիւններն ալ Գեր-

մանիոյ օրինակին հետեւելով մասնաւոր պատուիրակութիւններ

ըրկեն Պոլիս իր գահակալութեան 25ամեակի յորելանին առթիւ: Ֆրանսայի կողմէն Պ. Գոնսօթան

Պոլսոյ գեսպանը պիտի ըլլայ ներկայացուցիչ, որուն պիտի ընկերանայ զօրավար Պրանչ, հե-

ծելազօրաց բաժնի տեսուչ պա- տերազմական նախարարութեան: Գերմանիան կը զրկէ 11րդ

գունդի հրամանատար, զօրավար Վիթիշ, կայսեր թիկնապահ կոմս Մոլթքէ և հարիւրապետ մը: — Սասունի վերջին կոտորածի

Մէհմէտ պէյ Լոնտոն կը մեկնի յարաբերութեան մանելու հա-

մար՝ Անգլիա ապաստանած իր հայրենակիցներուն հետ: — Իզմիրի մէջ բէմի գէտերը

նաւ մը բռնեց են, որուն մէջ երկու յոյն և հայ մը կան եղեր կեղծ

անցագրերով և 120,000 փամբուշտ, 119 ռէփօլփէր և ռումբ պատրաստելու 10 կաղա- պար:

— Պոլսական թուրք թերթի մը մէջ կը կարգանք: Խարբերի կողմերը ժամանակէ

մը ի վեր ապաստակող աւաղակա- պետ Մէվլուտի ընկերներէն ե-

րբ հոգի վերջերս ընդհարում մը ունեցեր են ոտի՛ան զօրաց հետ:

Աւաղակապետներէն էն վտանգաւորը՝ Կարապետ, զօրաց վրոյ հրացոյն պարպած ըլլալով

ձերբակալուեր է: — Սուրիական եղերքներէն Պոլիս հասնող Նիկէր շոգենաին

մէջ ժանտախտի երկու դէպքեր պատահեր են: — Ռուսական դեսպան Չինո-

վիէվ վերջերս տեսակցութիւն մը ունեցած է արտաքին գործոց

նախարար Թէվֆիկ փաշայի հետ: Գեսպանը կրկին անգամ դիտո-

ղութիւններ է ըրեր Սասունի կո- տորածին համար, շեշտելով այն վատ պայտուրութիւնը, զոր թողած է Սուլթանի յորելանի նախըն- թաց օրը կատարուած այդ դէպ-

— Հետզհետէ Հոնկ-Քոնկ հա- սած են երկու Աւստրիական մար-

տանաւեր, նոյնպէս անգլիական փոխադրանաւ մը իր հետ բերե-

լով պաշարման կառախումբ մը և մէկ քանի թնդանօթներ և ֆը- րանսական երկու յածաորակ:

— Զօրավար Վալտէրգէ Բօրթ- Սախա հաւեր է: — Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Լոնտոնի պատերազմական պաշ- տօնատունը կը ծանուցանէ՝ թէ

Ռուսները, Պրուր և Բօլ Բարիւ զօրավարները միանալով կորե-

ւոր շարժում մը պիտի ընեն զօ- րավար Պօթայի դէմ:

— Ռուսները կը հեռագրէ. «Զօր. Բօլ Բարիւ օգոստ. 24ին

գրաւեց Պէլֆասար. Զօր. Պրուր Մաշատտօրի կողմէ կասալի

ընդգրկման մը հանդիպե- ցաւ: Ենգլիացիները բաւական

կորուստներ տուին: — Ռուսները գէտ սարքուած

դաւադրութեան համար ամրաս- տանուած դերմանացի տեղակալ

Կորտա մահուան դատապար- տուեր և հրացանի բռնուեր է: — Ռուսիոյ Զարր իր ներկա-

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Ռուսիոյ և Եգիպտոսի մեր զեռ չը վճարող բաժանորդներէ

կը խնդրենք որ հաճին փութա- ցընել իրենց բաժնեգրիները:

— Զ. Քաղաք, Համ. — Այո, վերջինի մասին էր, առաջինը տեսք

«Նարթուսի» 242րդ թուի մէջ: — Ֆիլիպէ, Վ. Մազ. — ընդու-

նամ ենք, սակայն պիտի ուշա- նայ որովհետեւ բանասիրականը արդէն գրաւուած է:

— Ֆիլիպէ, Եանթ. — Եթէ ուշագրութեամբ կարգաք «Նար- Ժուս» պիտի տեսնէք որ խոյս

կուտանք այդ տեսակ մարդոց հետ գործ ունենալէ: Կրնաք ձեր դիտողութիւնը ընել ձեր պաշ- տօնաթերթ օրկանի մէջ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԳ

Հոգաբարձութիւնս հարկ կը հա- մարի ծանուցանել թէ՛ ինչպատ Ազգ-

երկսեռ վարժարանաց կազմուած ձե- ազգործաց վիճակահանութիւնը որ տեղի պիտի ունենար ամ.ոյս 15ին,

յետաձգուած է Հոկտեմբեր 15ին. վիճակահանութեան տոմսերն զեռ արողը վրին ծախուած չըլլալուն պատճառաւ:

Այս առթիւ Հոգաբարձութիւնս կրկին կոչում կընէ արգոյ ազգոյ- նոց որ փութան գնել այդ տոմսերն յօգուտ ազգային աղքատ մանկաւոյն կրթութեան:

Ի դիմաց Ազգ. Երկ. վարժարանաց Հոգաբարձութեան Վ. Ատենաղպրի Ատենապետ Գ. Կիւլպիսեհեան Թ. Մ. Թոնլուսեան